«Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ 2012թ. փաստացի ֆինանսական հոսքերի հաշվետվություն

1. Արտադրատնտեսական և եկամտային ցուցանիշներ

1.1 *Ցանցին տրված ջուր և կորուստներ*

2012թ. ցանցին տրված ջրի ծավալը կազմել է 43119հազ. մ. խոր: Քանի որ 2012թ. ընթացքում վերակառուցվել են Ընկերության սպասարկման տարածքում միայն Մարալիկ, Ախուրյան և Ազատան համայնքների բաշխիչ ցանցերը, որոնցում, կորուստների մակարդակը նվազել է մինչև 30%, ընդհանուր համակարգում ընկերության կորուստները կազմել են 89.1%:

1.2 Ջրօգտագործողներին տրված ջուրը

Ջրօգտագործողներին տրված ջուրը 2012թ. կազմել է 4711հազ. մ. խոր, նախահաշվով նախատեսված 4800հազ.խոր.մ դիմաց կամ նախատեսված չափաքանակից 89 հազ.խոր.մետր պակաս: Նախահաշվով նախատեսվածից պակաս ջրի օգտագործումը կապված է այն հանգամանքի հետ, որ բաժանորդների կողմից ջրաչափական սարքերի լայնածավալ տեղադրումից հետո բաժանորդներին օգտակար առաքված ջուրը սկսել է հաշվառվել ջրաչափի ցուցմունքին համապատասխան, այլ ոչ թե առանց ջրաչափի բաժանորդների համար գործող հաշվարկային մեխանիզմով (խողովակի թողունակությամբ):

1.3 Մատակարարված ջրի հաշվարկային արժեքը

Մատուցվող ծառայությունների սակագինը հաշվետու տարում կազմել է 172,21 դրամ/մ^3, որից ջրամատակարարման համար՝ 146,30 դրամ/մ^3, իսկ ջրահեռացման համար՝ 25,91 դրամ/մ^3:

2012թ. հիմնական գործունեության գծով հասույթը կազմել է 786642 հազ.դրամ, նախահաշվով նախատեսված 800724 հազ.դրամի դիմաց, կամ նախահաշվից 14082 հազ.դրամով պակաս:

1.4. Ջրամատակարարման և ջրահեռացման մատուցված ծառայությունների դիմաց հավաքագրում

2012թ. հավաքագրումը կազմել է 745783հազ. դրամ՝ նախահաշվով նախատեսված 730711հազ. դրամի դիմաց: Հավաքագրումը կազմել է *հասույթի 96.6%-ը*՝ նախահաշվով նախատեսված 93%-ի փոխարեն: Դեբիտորական պարտքերի հավաքագրումը կազմել է 14.2 մլն դրամ:

2.Ծախսային ցուցանիշներ

2012թ. ընդհանուր ընթացիկ ծախսերը կազմել են 840.7 մլն. դրամ՝ նախատեսված 809.3 մլն. դրամի դիմաց: Վառելիքի գծով ծախսի աճը կապված է վառելիքի գնի բարձրացման հետ, իսկ նյութերի և վերանորոգումների գծով ծախսերի աճը պայմանավորված է տնտեսված միջոցների հաշվին նորոգումների ծավալի ավելացմամբ:

Ընդհանուր առմամբ, պլանավորվածի նկատմամբ փաստացի եկամուտների աճին զուգահեռ փաստացի ծախսերը պլանավորվածից պակաս լինելով 31.35մլն. դրամով, Ընկերությունում ծախսերի ներքին վերաբաշխման արդյունքում ապահովվել է հարաբերական կայուն տնտեսական իրավիճակ՝որում բացառվում են ժամկետանց կրեդիտորական պարտավորությունները և ինչպես ընթացիկ պլանային, այնպես էլ վթարային իրավիճակների հետ կապված ծախսերը իրականացված են ամբողջությամբ:

Միջազգային գլխավոր տնօրենի SS՝ Վ. Մարտիրոսյան

Ֆինանսական տնօրեն՝ Կ. Հարությունյան

«Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի 01.01.2012-31.12.2012թ.
փաստացի ֆինանսական հոսքերի հաշվետվություն

	Ցուցանիշների անվանումը	Չափի միավոր	2012թ.
I	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	հազ.դրամ	840,701
1	Ջրամատակարարումից և ջրահեռացումից հավաքագրում	հազ.դրամ	759,983
2	*Ջրօգտագործողներին տրված ջուր*	*հազ.խ.մ.*	*4,711*
2.1	Բնակիչ բաժանորդ	*հազ.խ.մ.*	3,673
2.2	Բյուջետային բաժանորդ	*հազ.խ.մ.*	686
2.3	Այլ սպառողներ	*հազ.խ.մ.*	351
3	Ցանցին տրված ջուր	*հազ.խ.մ.*	43,119
4	Մատուցված ծառայության հաշվարկային արժեքը	հազ.դրամ	786,642
4.1	Հաշվարկված խմելու ջուր	հազ.դրամ	689,028
4.2	Հաշվարկված կոյուղի	հազ.դրամ	97,614
5	Կորուստներ	%	89.1
6	Գանձումը հասույթի նկատմամբ	%	96.6
7	Ջրահեռացում	հազ.խ.մ.	3,768
7.1	Բնակիչ բաժանորդ	*հազ.խ.մ.*	*2,950*
7.2	Բյուջետային բաժանորդ	*հազ.խ.մ.*	*522*
7.3	Այլ սպառողներ	*հազ.խ.մ.*	*296*
8	Այլ եկամուտներ	հազ.դրամ	*56,904*
9	Ընկերության ԿԿ-ից Նոր Ակունք ՓԲԸ-ին տրված փոխառության հետվերադարձ	հազ.դրամ	*2,000*
10	Ջրամատակարարման և ջրահեռացման սակագին ԱԱՀ-ով	դրամ	172.21
	Խմելու ջրի	դրամ	*146.3*
	ջրահեռացման	դրամ	*25.91*
11	Տարեսկզբի դրամ. մնացորդի օգտագործում	հազ.դրամ	*21,814*
II	ԾԱԽՍԵՐ	հազ.դրամ	840,701
1.	Ձեռքբերումների զծով ծախսեր	հազ.դրամ	273,980
1.1	Քիմիկատների,վառելանյութի և պահեստամասերի ձեռքբերում, այդ թվում	հազ.դրամ	100,620
1.1.1	Քլոր, քիմիկատներ և լաբ. նյութեր	*հազ.դրամ*	14,024
1.1.2	Վառելիք	*հազ.դրամ*	*68,565*
1.1.3	Պահեստամասեր	*հազ.դրամ*	*18,031*
1.2	Այլ ապրանքանյութական արժեքների ձեռքբերում և կապալառուների միջոցով նորոգումների իրականացում, այդ թվում	հազ.դրամ	136,742
1.2.1	Ապրանքանյութական արժեքներ	*հազ.դրամ*	*64,621*
1.2.2	Նորոգումներ	*հազ.դրամ*	*72,121*
1.2.3	էլեկտրաէներգիայի ծախս	հազ.կվտ.ժ	1,221
		հազ.դրամ	*36,618*
		դրամ/կվտ.ժ	*30.00*
2	Շահագործման և տեխնիկական սպասարկման ծախսեր	հազ.դրամ	395,887
2.1	Աշխատավարձ(ներառյալ գործուղման ծախսեր)	հազ.դրամ	*340,556*
2.2	Տնտեսական, գրասենյակային և այլ ծախսեր (ներառյալ գործուղման ծախսեր)	հազ.դրամ	*55,331*
3	Հաշվարկված հարկեր, տուրքեր, վճարներ	հազ.դրամ	90,646
3.1	ԱԱՀ	հազ.դրամ	*76,775*
3.2	Բնապահպանական վճար	հազ.դրամ	*9,489*
3.3	Բնօգտագործման ծախսեր	հազ.դրամ	*2,384*
3.4	Գույքահարկ , կարգավորման պարտադիր վճար և այլ հարկեր	հազ.դրամ	*1,998*
4	Վարկերի և փոխառությունների սպասարկում	հազ.դրամ	78,188
5	Կանոնադրական կապիալի վերականգնում ("Նոր Ակունք" ՓԲ ընկերության կողմից փոխառության վերադարձման արդյունքում)	հազ.դրամ	2,000
III	Հաշվեկշիռ	հազ.դրամ	(0)

Միջազգային գլխավոր տնօրենի՝ Վ. Մարտիրոսյան

Ֆինանսական տնօրեն՝ Կ. Հարությունյան